

# «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ

### ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 53-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով

«8.1. Սույն հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հայտարարությունների ներկայացումը հիմք չի հանդիսանում «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված հերթական տարեկան պետական տուրքի գումարները չհաշվառելու համար:

Հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունը շարունակում է հաշվարկվել մինչև «Պետական տուրքի մասին» օրենքի 6<sup>1</sup>-րդ հոդվածով սահմանված՝ տարեկան պետական տուրքի վճարման պարտավորության դադարեցման հիմքերից որևէ մեկի ի հայտ գալու օրը:»

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: